

Ա Ռ Ջ

Գրուսայի եւ Բիւրանիոյ շշաններու հայուրեան ամբողջական պատմութիւնը հրատարակելու նպատակով, Հալէպի մեջ կազմուած է Կեդրոնական Յանձնախումբ մը, որուն անդամներն են,

Տեսություն

- |  |           |            |
|--|-----------|------------|
| 1. — Մինրդաս Տիգրանեան, պատուակալ Նախազան Նիկոմիդիացի (Մ. Նահանգներ) |           |            |
| 2. — Սարգիս Սելիսան  | Ասենապես  | Օվանքցի    |
| 3. — Գրիգոր Երեցեան  | Ասենապյիր | Սկօլկօցի   |
| 4. — Վահան Վարդանեան   | Գանձապահ  | Կեօլտաղի   |
| 5. — Յառուրիւն Զարեան  | Հառուապահ | Կեօլտաղի   |
| 6. — Մինաս Թէօլէօնեան  | Դիւանապես | Պարտիզակցի |

Հրատարակուելիք գիրքը պիտի ունենայ հետեւեալ բաժինները :

1. — Պատմական ակնարկ մը հինգ մինչեւ մեր օրերը : 2. — Ազգագրական եւ Տեղագրական : 3. — Կենցաղային եւ Լեզուական : 4. — Մօակուրային եւ Տնեսական : 5. — Հանրային եւ Հասարակական : 6. — Հերոսամարտեր :

Հրատարակուելիք գիրքը պիտի կոչուի «Պատմագիրք Պրուսայի եւ Բիւթանիոյ Հայութեան» :

Սոյն «Պատմագիրքը» պիտի ընդգրկէ նետեւեալ բոլոր գիւղերու եւ գիւղաբանականներու պատմութիւնը, բարբառները, աւանդութիւնները եւայն :

Այսոն Դարահիսար, Ատափազար, Արսլանպէկ, Ազիճսար, Արմաշ, Ասարնըզ, Դրներլար, Ենիճէ, Եալօվա, Ենիպազզար, Գուրստ Գէլէնկ, Էշմէ, Էսկիշէնիր, Էտին-ճիկ, Թամլըզ, Ժամավայր, Թիւրքմէն, Իզնիկ (Նիկիա), Իզմիտ (Նիկոմիդիա), Խարսախ, Խասկալ, Կէյվէ, Կէօլտաղ, Կիւրլէ, Համիտիլէ, Ճէրահ, Մուրատչայ, Միալըն, Մեծ Նոր-Գիւղ, Մանուշակ, Մարմարնըզ, Մէրսէկէօզ, Նոր Գիւղ, Շախշախ, Չէնկիլէր, Չալկարա, Պարտիզակ, Պրուսա, Պանորմա, Պալքէչսիր, Պէյնի, Պիէնիկ, Մէօլէօզ, Մապաննա, Մապաննայի Նոր-Գիւղ, Սիվրինիսար, Տէօնկէլ, Տաղրէօյ, Տէօնկէլի սուրբը, Տէվրէկ, Քէրէմէթ, Քէօթահիա, Օրթազիւլ, Օվանըզ, Ֆէրիզի, Գրլըն Գիւղ, Խէնտէկ, Գարամուսալ, Եալագ-Տէրէ, Սլըննա, Մուտանիա, Տէրվէնտ, Տիւզէլ :

Այսու կոչ կ'ընենք բոլոր մեր հայենակիցներուն, ուպեսզի առանց դաւանական եւ կուսակցական խորուրեան իրենց մօս գնուած նօրեր, Եկարներ, Վաւերարուլրեր, յոււեր, նոյնիսկ վերոգրեալ անուններն մեկն ու միւսը ընդգրկող հրատարակուած գիրքեր տարագրեան Կեդրոնական Յանձնախումբիս, մինչեւ 1956 Յունիս, այն հասան համոզումով որ դրկուածները խնամքով պիտի պահուին, ու գործի լուսմեն յետոյ պիտի վերադառնին :

Պայման չէ գրաել բլլալ, մեզի բերելու համար այս օժանդակութիւնը. կը բաւէ նիւր մատակարարել: Կեդրոնական Յանձնախումբս պիտի դասաւորէ եւ հրատարակելի վիճակի մեջ պիտի դնէ զանոնք:

Բոլոր նիւրական նույրասուուրիւններն ու բդրակցուրիւնները կատարել Յանձնախումբս Ահենապետին հասցեով:

*Mr. Sarkis Selian  
Pharmacie L'Aurore  
Rue Tillef № 55, Alep, Syrie*

ՊՐՈՒՍԱՅԻ ԵՒ ԲԻՒԹԱՆԻՈՑ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ  
«ՊԱՏՄԱԳԻՐՔԻ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ